ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆՈՒՇ ՀՈՎԻԿԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ – 2025

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

МОВСИСЯН АНУШ ОВИКОВНА

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ЕРЕВАН - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր **Ա. Ռ. Հարությունյան**
Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ա. Լ. Ասատրյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ Ներքին գործերի նախարարության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի մայիսի 14-ին՝ ժամը 16.^{00}-ին, Հայ-ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք.Երևան, Հովսեփ Էմին 123):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2025 թվականի ապրիլի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ. Հ. Հայրապետյան**

Тема диссертации утвервждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук,профессор **Г. Г. Сафарян**
Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **А. Г. Вагаршян**
кандидат юридических наук **А. А. Манукян**
Ведущая организация: **Образовательный комплекс Министерства внутренних дел РА**

Защита состоится 14 мая 2025 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (г. Ереван, 0051, Овсепа Эмина 123).
С диссертацией можно ознакомиться в научной библиотеке Российско-Армянского университета.
Автореферат разослан 10 апреля 2025 года.
Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук **Дж. А. Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հանրային ծառայության ինստիտուտը ունի խորը արմատներ, ձևավորվել է պետության և իրավունքի առաջացման հետ մեկտեղ, ամրապնդվել և անցել է զարգացման երկարատև ճանապարհ: 2001 թվականի դեկտեմբերի 4-ի «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՕ-272 օրենքի ընդունմամբ ՀՀ-ում փաստացի ներդրվեց հանրային ծառայության համակարգը, հանրային ծառայությունը կանոնակարգող օրենսդրական-նորմատիվային դաշտը բազմիցս ենթարկվել է փոփոխությունների, որոնք հիմնականում միտված են եղել այդ համակարգի կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացմանը: 2014 թվականից նախաձեռնված և ներկայումս ընթացող հանրային ծառայության համակարգի լայնածավալ բարեփոխումները պայմանավորված են պետության ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ, հանրային կառավարման արդյունավետության բարձրացմամբ, ինչպես նաև իրավական պետության սոցիալական, քաղաքական կայունության ամրապնդմամբ: Այս նպատակներն իրագործելու առանցքային հիմնախնդիրներից մեկը հանրային իշխանության մարմինների բնականոն գործունեությունն ապահովող, հանրային կառավարման արդյունավետության բարձրացումն երաշխավորող կառուցակարգի՝ հանրային ծառայության ինստիտուտի ստեղծումն ու զարգացումն է:

Կարևորելով հանրային ծառայության համակարգի կայացմանն ու կատարելագործմանն ուղղված լայնածավալ բարեփոխումների իրականացումը՝ այդուհանդերձ, կարող ենք արձանագրել, որ ներկայումս հանրային ծառայության օրենսդրական կարգավորումներում դեռևս առկա են չլուծված հիմնախնդիրներ ու օրենսդրական բացեր, որոնք հրատապ լուծման կարիք ունեն և մեծապես վերաբերում են հանրային ծառայության համակարգի կատարելագործմանը: Այս առումով հիմնախնդիրների լուծումը պետք է ուղղված լինի հանրային ծառայողների անհատական մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հիմքի վրա կարիերային առաջընթացի խթանմանը, թափուր պաշտոնների համալրման և մրցույթի արդյունքում ընտրություն կատարելու եղանակների արդիականացմանը, վերապատրաստման դասընթացներում ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառմանը, կադրերի ռեզերվի վարման արդյունավետ կառուցակարգերի մշակմանը, հանրային ծառայողի անձնական պատասխանատվության սկզբունքի գործնական կիրառմանը, հանրային ծառայություն ընդունվելու որակական չափանիշների սահմանմանը և կիրառմանը:

Նշված հիմնախնդիրների լուծմամբ է մեծապես պայմանավորված ՀՀ-ում հանրային ծառայության համակարգի լիարժեք կայացումն ու արդյունավետ գործարկումը, հետևաբար հանրային ծառայության համակարգում առկա օրինաչափությունների և հիմնախնդիրների համակողմանի հետազոտման ու համապատասխան օրենսդրական առաջարկությունների ներկայացման անհրաժեշտությամբ է պայմանավորված ատենախոսության թեմայի ընտրությունը, հետազոտման արդիականությունն ու նշանակությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է հանրային ծառայությունը կանոնակարգող օրենսդրական կարգավորումների տեսական-իրավական վերլուծության արդյունքում վեր հանել հանրային ծառայության՝ որպես իրավական ինստիտուտի ծագման, զարգացման օրինաչափությունները, առկա հիմնախնդիրները, միջազգային փորձի համադրմամբ ներկայացնել հանրային ծառայության համակարգի բարելավմանը, կատարելագործմանն ու առկա օրենսդրական բացերի հաղթահարմանն ուղղված, գիտականորեն հիմնավորված առաջարկություններ և իրավական լուծումներ: Այս նպատակներն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- բացահայտել հանրային ծառայության համակարգի ձևավորման նախադրյալները և զարգացման փուլերի առանձնահատկությունները՝ վեր հանելով յուրաքանչյուր փուլին բնորոշ օրինաչափությունները,
- վերլուծել «հանրային ծառայություն» հասկացության վերաբերյալ առկա տեսական մոտեցումները, ընդհանրացնել զարգացման հիմնական օրինաչափությունները և ձևակերպել «հանրային ծառայություն» հասկացության գիտական սահմանումը,
- ուսումնասիրել հանրային ծառայության սկզբունքների ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները, վերլուծել դրանց բովանդակային բնույթը և ձևակերպել «հանրային ծառայության սկզբունք» հասկացության գիտական սահմանումը,
- համեմատական-իրավական մեթոդի կիրառմամբ բացահայտել պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոնների կառուցակարգային յուրահատկություններն ու ընդհանրությունները,
- ուսումնասիրել համայնքային ծառայության պաշտոնների և հանրային պաշտոնների դասակարգման օրինաչափությունները և վեր հանել դրանց հիմնախնդիրները,
- վերլուծել համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնող անձանց համար օրենքով սահմանված ընդհանուր պահանջները և բացահայտել դրանց յուրահատկությունները,

• հետազոտել հանրային ծառայողի վերապատրաստման, ատեստավորման, կադրերի ռեզերվում գրանցվելու և մրցույթների գործընթացները՝ վեր հանելով դրանց հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները,

• բացահայտել հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց փոխարինման կամ ազատման հետ կապված հիմնախնդիրները, վերլուծել դրանց պատմական զարգացման օրինաչափությունները և ներկայացնել ինստիտուցիոնալ լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության իրավական համակարգն է՝ իր առանձին և ինքնուրույն ենթատեսակներով: Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության համակարգի զարգացման օրինաչափություններն ու հանրային ծառայության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներն են:

Հետազոտության թեմայի գիտական ուսումնասիրության վիճակը: Հետազոտության թեմայի վերաբերյալ կան որոշ հետազոտություններ, որոնք, սակայն, ամբողջովին չեն արտացոլում հանրային ծառայության համակարգում առկա տեսական և կիրառական հիմնահարցերի վերաբերյալ ներկայիս իրավական գործընթացները, իսկ որոշ դեպքերում նվիրված են միայն հանրային ծառայության այս կամ այն տեսակի հետ կապված առանձին հարցերի ուսումնասիրությանը: Հայրենական իրավագիտության մեջ բացակայում է համակողմանի ու ընդգրկուն ձևաչափով իրականացված որևէ հետազոտություն, որը նվիրված կլինի հենց հանրային ծառայության տեսական-իրավական հիմնախնդիրների համակողմանի վերլուծությանը, հանրային ծառայության համակարգի զարգացման օրինաչափությունների ու առկա հիմնախնդիրների պարզաբանմանը, ինչպես նաև հանրային ծառայության տեսակների հիմնական առանձնահատկությունների բացահայտմանն ու իրավական լուծումներ առաջադրելուն: Պետք է նշել նաև, որ կան թեկնածուական ատենախոսություններ, որոնք նվիրված են հանրային ծառայության այս կամ այն տեսակի հիմնահարցի լուսաբանմանը: Մասնավորապես՝ պաշտպանվել են հետևյալ թեկնածուական ատենախոսությունները՝ «Համայնքային ծառայության իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» (Մ. Ա. Մակինյան, 2011թ., Երևան), «Համայնքային ծառայության համակարգում պաշտոններ զբաղեցնելու հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» (Ս. Ս. Մանուկյան, 2012թ., Երևան), «Հանրային ծառայության կառավարման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» (Հ. Մ. Հարությունյան, 2016թ., Երևան):

Այսպիսով՝ ատենախոսության թեման բավարար չափով հետազոտված չէ, դեռևս համակարգված ուսումնասիրության առարկա չի դարձել, բացակայում է հանրային ծառայությանը և նրա տեսակներին նվիրված ամբողջական, համալիր հետազոտություն, հետևաբար հանրային ծառայության համակարգի զարգացման օրինաչափությունների և արդի հիմնախնդիրների հետազոտության անհրաժեշտությունը առկա է նաև թեմային առնչվող հիմնահարցերի հետազոտվածության աստիճանի տեսանկյունից:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Հետազոտության նպատակներով և խնդիրներով պայմանավորված՝ կիրառվել են համընդհանուր ճանաչողության (դիալեկտիկական, պատմական, տրամաբանական), ընդհանուր գիտական ճանաչողության (անալիզ, համակարգային կառուցվածքային վերլուծություն) և իրավագիտության հատուկ մեթոդներ (համեմատական-իրավական, ձևական-իրավական, իրավական մոդելավորման):

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ հետազոտությունը հայրենական իրավագիտության մեջ հանրային ծառայության համակարգի սահմանադրաիրավական կարգավորումների ուսումնասիրությանը, հանրային ծառայության՝ որպես իրավական ինստիտուտի զարգացման օրինաչափություններին և նրա առանձին տեսակների տեսական-իրավական համալիր հիմնախնդիրների բացահայտմանը նվիրված առաջին համակողմանի հետազոտությունն է: 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՕ-205-Ն օրենքների հիմնադրույթների համատեքստում հանրային ծառայության ինստիտուտը միանգամայն նոր հարցադրումներով է հետազոտվել, նորովի անդրադարձ է կատարվել հանրային ծառայության իրավական հիմքերին, վեր են հանվել հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակը կարգավորող օրենսդրության մեջ առկա իրավական հակասություններն ու օրենսդրական բացերը, միջազգային փորձի համադրմամբ առաջադրվել են հանրային ծառայության օրենսդրության կատարելագործմանն ուղղված, գիտականորեն հիմնավորված մի շարք նոր իրավադրույթներ, առկա իրավադրույթների վերախմբագրման առաջարկություններ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներ: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ձևավորվել են պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները՝

1. Հանրային ծառայության ոլորտում կիրառվող իրավական կարգավորումների համակարգայնացման նպատակով առաջարկվել է մշակել հանրային ծառայության բոլոր տեսակների իրավական կարգավորումները

միավորող և համապարփակ Հանրային ծառայության օրենսգիրք, որը կնպաստի հանրային ծառայություն ոլորտում գործող նորմատիվ-իրավական դաշտի օպտիմալացմանը, իրավական հակասությունների և անհամապատասխանությունների վերացմանը, ինչպես նաև հանրային ծառայության ամբողջ համակարգի համար միասնական և կանխատեսելի իրավակարգավորումների ապահովմանը:

2. Յուրաքանչյուր քաղաքացու հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքի իրացման նպատակով առաջարկվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում սահմանված հանրային ծառայություն ընդունելու ընդհանուր հիմունքներն ու սահմանափակումները տարածել նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վրա:

3. Հանրային ծառայության արժանիքահենության և քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիության սկզբունքների ապահովման նպատակով՝ հանրային ծառայություն ընդունվելու մրցութային գործընթացների օրինաչափությունների ուսումնասիրության հիման վրա ներկայացվել են ներքին և արտաքին մրցույթների անցկացման տարբերակված կառուցակարգեր, առաջարկվել է համայնքային ծառայության համակարգից հանել արտամրցութային եղանակով թափուր պաշտոնի համալրման կառուցակարգը և նախատեսել ներքին մրցույթի կարգավորումներ, օրենսդրությամբ ամրագրել մրցույթի արդյունքում ընտրություն կատարելու արժանիքահեն եղանակ:

4. Հանրային ծառայության արդյունավետության բարձրացման և գործող հանրային ծառայության համակարգի արդիականացման ու կատարելագործման նպատակով առաջարկվել է՝

- ստեղծել Հանրային ծառայողների վերապատրաստման դպրոց և իրականացնել հանրային ծառայողների անհատական կարիքների նպատակային վերապատրաստում.
- ներդնել անձի հայերենի գիտելիքների ստուգման միասնական համակարգ՝ որպես հայերենին տիրապետելու օրենսդրական պահանջը գործնականում գնահատող կամ ստուգող կառուցակարգ.
- ներդնել և կիրառել հանրային ծառայողի անձնական պատասխանատվության ինստիտուտ.
- նախատեսել հանրային ծառայողին փոխարինելու ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար փոխարինողի վարձատրության կառուցակարգ:

5. Համայնքային ծառայության համակարգի ինստիտուցիոնալ բարելավման նպատակով ներկայացվել են առաջարկություններ համայնքային

ծառայության պաշտոնների դասակարգման համակարգը վերանայելու և արդիականացնելու ուղղությամբ, առաջարկվել է հանել «Համայնքային ծառայության մասին» օրենքով նախատեսված համայնքային ծառայողների ատեստավորման ինստիտուտը և ներդնել համայնքային ծառայողների կատարողականի գնահատման նոր մեխանիզմ:

6. Սահմանադրության և միջազգային իրավական նորմերի պահանջները իրացնելու, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքից ազատելու հայեցողական լիազորությունը չարաշահելու կամ կամայական կիրառելու իրավական հնարավորությունը բացառելու, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ժամանակավոր բացակայության հիմքեր առաջանալու դեպքերում վերջիններիս վերապահված գործառույթների անընդհատությունն ու ինստիտուցիոնալ կայունությունն ապահովելու նպատակով առաջարկվել է սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց փոխարինման և ազատման իրավական հիմնավոր և կանխատեսելի կառուցակարգեր:

7. Պետական և համայնքային կազմակերպություններում, հիմնարկներում աշխատողների իրավական կարգավիճակը հստակեցնելու նպատակով առաջարկվել է հանրային ծառայողների շրջանակում ընդգրկել նաև պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների աշխատողներին:

Հետազոտության գիտական-տեսական նշանակությունը: Ատենախոսության գիտական-տեսական նշանակությունն այն է, որ համակողմանի վերլուծության է ենթարկվել հանրային ծառայության օրենսդրությամբ ամրագրված իրավական կարգավորումները, մասնավորապես՝ փորձ է կատարվել սահմանելու «հանրային ծառայություն» հասկացությունը, «հանրային ծառայության սկզբունքներ» հասկացությունը, բացահայտելու հանրային ծառայության էության, հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները և դրանց բնորոշ հատկանիշները, ուսումնասիրելու մրցութային կարգով հանրային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու էությունը, բացահայտելու հանրային ծառայողների վերապատրաստման, ատեստավորման գործընթացների առանձնահատկությունները, ինչպես նաև հանրային պաշտոնների դասակարգման համակարգին բնորոշ յուրահատկությունները և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց փոխարինման կամ ազատման հետ կապված հիմնախնդիրները: Ատենախոսությունում բովանդակած դրույթները, եզրահանգումներն ու առաջարկությունները (իրավական լուծումները), որոնք կապված են հանրային ծառայության համակարգի բարելավման արդի հիմնախնդիրների հետ, ձևավորում են անհրաժեշտ գիտական-տեսական հենք՝ Հայաստանի Հանրապետությունում

հանրային ծառայության համակարգի կատարելագործման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու համար:

Հետազոտության գործնական-կիրառական նշանակությունը կարևորվում է նրանով, որ ատենախոսության մեջ կատարված վերլուծությունները, դրանց հիման վրա արված եզրահանգումները և գիտականորեն հիմնավորված իրավական լուծումները կարող են կիրառվել իրավաստեղծ գործունեության ոլորտում՝ հանրային ծառայության, ինչպես նաև հանրային ծառայության նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթների կատարելագործման նպատակով: Ատենախոսությունը կարող է հիմք հանդիսանալ նաև ուսումնական, մեթոդաբանական և գիտական գրականության մշակման ժամանակ, ինչպես նաև «Հանրային ծառայության հիմունքներ», «Հանրային ծառայության համակարգ» ուսումնական դասընթացների դասավանդման ընթացքում:

Ատենախոսության փորձարկումը: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Պետահիրավական հետազոտությունների բաժնում: Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և շարադրված է 178 համակարգչային էջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական մշակվածության աստիճանը, ատենախոսական աշխատանքի մեթոդաբանական հիմքերը և գիտական նորույթը, ձևակերպվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հիմնավորվել է հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության՝ «**Հանրային ծառայությունը որպես համալիր իրավական ինստիտուտ**» խորագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Հանրային ծառայության ձևավորման նախադրյալները և զարգացման փուլերը» վերտառությամբ առաջին ենթագլխում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ինստիտուտի ձևավորման իրավական և պատմական նախադրյալները, հանրային ծառայության համակարգի

ներդրման, կայացման և զարգացման օրինաչափությունները, առանձնացվել և ներկայացվել են հանրային ծառայության ինստիտուտի ձևավորման և զարգացման առանձին փուլերը:

«Հանրային ծառայության էությունը և սկզբունքները» վերտառությամբ երկրորդ ենթագլխում ուսումնասիրվել է հանրային ծառայության իրավական ինստիտուտի էությունը, արտասահմանյան երկրների և ներպետական օրենսդրությամբ ամրագրված հանրային ծառայության բնորոշումը, վերլուծվել են հանրային ծառայության կազմակերպման սկզբունքները, բացահայտվել է հանրային ծառայության յուրաքանչյուր սկզբունքի բովանդակությունը և զարգացման օրինաչափությունները, ներկայացվել են համապատասխան օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

«Հանրային ծառայության տեսակները և դրանց առանձնահատկությունները» վերտառությամբ երրորդ ենթագլխում ներկայացվել են հանրային ծառայության տեսակները, ուսումնասիրվել են հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակին բնորոշ հատկանիշները և զարգացման օրինաչափությունները, ինչպես նաև հիմնավորվել է, որ հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձին օրենսդրական կարգավորումները և իրեն բնորոշ առանձնահատուկությունները:

Ատենախոսության՝ «**Պետական ծառայության հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում»** խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Պետական ծառայության դասակարգումը և փոխհարաբերությունը հանրային ծառայության մյուս տեսակների հետ» վերտառությամբ առաջին ենթագլխում ուսումնասիրվել և վերլուծվել են «պետական ծառայություն» հասկացության սահմանումը և պետական ծառայությանը բնորոշ հիմնական հատկանիշները, զարգացման օրինաչափությունները, բացահայտվել են պետական ծառայության ընդհանրությունները և տարբերությունները հանրային ծառայության մյուս տեսակների՝ համայնքային ծառայության և հանրային պաշտոնների հետ, ներկայացվել են համապատասխան օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

«Պետական ծառայության առանձնահատկությունները և իրավական կարգավորման սկզբունքները» վերտառությամբ երկրորդ ենթագլխում ուսումնասիրվել են պետական ծառայության մեջ ընդգրկվող 15 առանձին ծառայությունների օրենսդրական-նորմատիվային կարգավորումներն ու առանձնահատուկությունները, ներկայացվել է հանրային ծառայության առանձին տեսակ հանդիսացող պետական ծառայության կազմակերպման և իրականացման

ընդհանուր օրինաչափությունները, համաչափության սկզբունքի համատեքստում ուսումնասիրվել և տեսական-իրավական վերլուծության են ենթարկվել յուրաքանչյուր քաղաքացու հանրային ծառայություն՝ պետական ծառայություն ընդունվելու սահմանադրական իրավունքի ընդհանուր հիմունքները և սահմանափակման հիմքերը:

«Պետական ծառայության արդի հիմնախնդիրները և դրանց իրավական լուծումները» վերտառությամբ երրորդ ենթագլխում ուսումնասիրվել են պետական ծառայությունը կանոնակարգող կառուցակարգերը՝ վեր հանելով պետական ծառայության ծագման և զարգացման օրինաչափությունները, պետական ծառայությունը կարգավորող օրենսդրության մեջ առկա տեսական-իրավական հիմնախնդիրները, օրենսդրական բացերն ու իրավական հակասությունները, հիմնավորվել է, որ պետական ծառայության համակարգում վերհանված հիմախնդիրները հանրային ծառայության ցածր արդյունավետության, հասարակության զարգացման խնդիրների լուծմանը անբավարար ճկունության, պետական մարմիններում անձնակազմի ոչ ճիշտ պլանավորման և կառավարման պատճառ են հանդիսանում, ներկայացվել են համապատասխան օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

Ատենախոսության՝ «**Համայնքային ծառայության հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում»** խորագրով երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Համայնքային ծառայության էությունն ու նշանակությունը» վերտառությամբ առաջին ենթագլխում ուսումնասիրվել է համայնքային ծառայության՝ որպես հանրային ծառայության առանձին տեսակի արտասահմանյան երկրների և ներպետական օրենսդրությամբ ամրագրված բնորոշումը, ներկայացվել են համայնքային ծառայության ձևավորման և ներդրման իրավական հիմքերը, զարգացման օրինաչափությունները, ուսումնասիրվել և վերլուծվել են տարբեր երկրներում գործող համայնքային ծառայության համակարգերը, և հիմնավորվել է, որ համայնքային ծառայությունն ունի հանրային, իրավական, սոցիալական, տնտեսական, էթիկական և կազմակերպական-կառավարչական նշանակություն:

«Համայնքային ծառայության առանձնահատկությունները» վերտառությամբ երկրորդ ենթագլխում ուսումնասիրվել և վեր են հանվել համայնքային ծառայությանը բնորոշ հիմնական առանձնահատկությունները, և հիմնավորվել է, որ այդ առանձնահատկությունները հիմնականում ի հայտ են գալիս համայնքային ծառայության պաշտոնների դասակարգման նորմերում, համայնքային ծառայության պաշտոնները ոչ միայն ՀՀ քաղաքացիների, այլև փախստականի կարգավիճակ ունեցողների կողմից զբաղեցնելու նորմերում,

համայնքային ծառայության թափուր պաշտոնը արտամրցութային եղանակով զբաղեցնելու կարգավորումներում, ժամանակավոր թափուր պաշտոնը մինչև վեց ամիս ժամկետով փոխարինման իրավական նորմերում, համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու նորմերում:

«Համայնքային ծառայության արդի հիմնախնդիրները և դրանց իրավական լուծումները» վերտառությամբ երրորդ ենթագլխում ուսումնասիրվել են համայնքային ծառայությունը կարգավորող կառուցակարգերը՝ վեր հանելով համայնքային ծառայության ծագման և զարգացման օրինաչափությունները, համայնքային ծառայությունը կարգավորող օրենսդրության մեջ առկա տեսական-իրավական հիմնախնդիրները, օրենսդրական բացերն ու իրավական հակասությունները, ներկայացվել են համայնքային ծառայության համակարգի արդիականացման և կատարելագործման ուղղությամբ օրենսդրական առաջարկություններ:

Ատենախոսության՝ **«Հանրային պաշտոններ զբաղեցնելու հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում»** խորագրով չորրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Հանրային ծառայության պաշտոն», «հանրային պաշտոն», «հանրային ծառայող» և «հանրային ծառայության մեջ գտնվող անձ» հասկացությունների հարաբերակցությունը» վերտառությամբ առաջին ենթագլխում անդրադարձ է կատարվել «պաշտոն» եզրույթի բովանդակությանը, ուսումնասիրվել և վերլուծվել են «հանրային ծառայության պաշտոն», «հանրային պաշտոն», «հանրային ծառայող» և «հանրային ծառայության մեջ գտնվող անձ» եզրույթների բովանդակությունն ու իրավական շրջանակը, և հիմնավորվել է, որ հիշյալ եզրույթները թե՛ բովանդակային, թե՛ իրավական առումով միանգամայն տարբեր հասկացություններ են:

«Հանրային պաշտոնների դասակարգումը և դրանց առանձնահատկությունները» վերտառությամբ երկրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվել հանրային պաշտոնների տեսակների դասակարգմանը, ներկայացվել է հանրային պաշտոնների տեսակների 2001 թվականի, 2011 թվականի և 2018 թվականի օրենսդրության համեմատական վերլուծություն, հանրային պաշտոնների յուրաքանչյուր տեսակի մեջ ընդգրկվող պաշտոնների բովանդակությունն ու իրավական շրջանակը, բացահայտվել է այդ պաշտոնները զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակը, վեր են հանվել հանրային պաշտոնների յուրաքանչյուր տեսակին բնորոշ առանձնահատկությունները և զարգացման

օրինաչափությունները, ներկայացվել են այդ պաշտոնները զբաղեցնելու համար ընդհանուր պայմանները ու պահանջները:

«Հանրային պաշտոնների նշանակման և ազատման արդի հիմնախնդիրները և դրանց իրավական լուծումները» վերտառությամբ երրորդ ենթագլխում ուսումնասիրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նշանակման (փոխարինման) և ազատման հետ կապված օրենսդրական կարգավորումները, վերաբերելի միջազգային փորձը և դատական պրակտիկան, հիմնավորվել է, որ հանրային ծառայության համակարգում կարևորագույն հիմնախնդիր է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նշանակման (փոխարինման) և ազատման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական նորմերի ոչ բավարար կարգավորումը կամ բացակայությունը, բացահայտվել է, որ սահմանված չէ որևէ իրավական կարգավորում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց փոխարինելու կամ փոխարինող նշանակելու վերաբերյալ կամ օրենքով ամրագրված չեն հանրային պաշտոն զբաղեցնող անձին տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող անձի նախաձեռնությամբ ազատելու իրավական հիմքեր, առաջարկվել է «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց փոխարինելու կամ ազատելու հիմքեր:

Ատենախոսության **«Եզրակացություն»** բաժնում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1.Հանրային ծառայության ոլորտում կիրառվող իրավական կարգավորումների համակարգայնացման նպատակով առաջարկվել է ամբողջացնել հանրային ծառայությունը կանոնակարգող իրավական նորմերը և ընդունել Հանրային ծառայության օրենսգիրք*:* Հանրային ծառայության օրենսգրքի ընդունումը թույլ կտա վերացնել պետական ծառայության առանձին տեսակները և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներում առկա հիմնախնդիրները (հանրային ծառայության պաշտոնների դասակարգում, մրցութային գործընթացներ, վերապատրաստում, կադրերի ռեզերվի վարում, անձնական պատասխանատվության սկզբունքի կիրառում), կնպաստի հանրային ծառայության բոլոր տեսակների համընդհանուր կարգավորմանը, գործող մի շարք օրենսդրական ակտերի թվաքանակի կրճատմանը, դրանց միջև առկա իրավական հակասությունների և անհամապատասխանությունների վերացմանը:

2. Սահմանադրության 49-րդ հոդվածով ամրագրված յուրաքանչյուր քաղաքացու հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացումն ապահովելու նպատակով առաջարկվել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հանրային ծառայություն ընդունվելու ընդհանուր հիմունքները և

սահմանափակումները տարածել նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի «Հանրային ծառայության կազմակերպման առանձնահատկությունները» վերտառությամբ 3-րդ գլխում ընդգրկված «Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքը» և «Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեցող անձը» վերնագրերով համապատասխանաբար 13-րդ և 14-րդ հոդվածները չեն համապատասխանում Սահմանադրության 49-րդ հոդվածի պահանջներին, քանի որ այդ հոդվածներով սահմանված դրույթները տարածվում են միայն հանրային ծառայողների վրա, մինչդեռ ընդհանուր հիմունքները և սահմանափակումները հավասարապես վերաբերելի են հանրային ծառայության բոլոր տեսակներին: Հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքի իրացումն ապահովելու նպատակով ատենախոսության մեջ առաջարկվել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 13-րդ և 14-րդ հոդվածների վերնագրերը և այդ հոդվածների բովանդակությունը համապատասխանեցնել Սահամանդրության 49-րդ հոդվածով սահմանված իրավական կարգավորման պահանջներին:

3. Հանրային ծառայության ընդունվելու մրցութային գործընթացների առանձնահատկությունների և օրինաչափությունների ուսումնասիրության հիման վրա ներկայացվել են ներքին և արտաքին մրցույթների անցկացման տարբերակված կառուցակարգեր, հանրային ծառայության արժանիքահենության և քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիության՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և կոմպետենցիաներին համապատասխան սկզբունքների ապահովման նպատակով ներկայացվել է մրցույթի արդյունքում ընտրություն կատարելու արժանիքահեն եղանակ: Այսպես՝

❖ առաջարկվել է համայնքային ծառայության օրենսդրությունից հանել թափուր պաշտոնը զբաղեցնելու արտամրցութային եղանակը և նախատեսել ներքին մրցույթի կարգավորումներ,

❖ առաջարկվել է ներքին մրցույթն անցկացնել առանց թեստավորման փուլի՝ միայն հարցազրույցի արդյունքների հիման վրա՝ միաժամանակ սահմանելով թեկնածուների ընտրության հստակ չափանիշներ, որոնց միջոցով պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կկարողանա գնահատել անձի մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, անձնային հատկանիշներ, ունակություններն ու կարողությունները,

❖ առաջարկվել է օրենսդրությամբ սահմանել, որ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվում հարցազրույցի փուլը հաղթահարելու համար նախատեսված նվազագույն շեմը հաղթահարած և ամենաբարձր միավորներ հավաքած թեկնածուն:

4. Հանրային ծառայության արդյունավետության բարձրացման և գործող հանրային ծառայության համակարգի արդիականացման ու կատարելագործման նպատակով առաջարկվել է՝

❖ ստեղծել հատուկ կառույց՝ Հանրային ծառայողների վերապատրաստման դպրոց, որը յուրաքանչյուր հանրային ծառայողների անհատական կարիքների գնահատման հիման վրա կիրականացնի հանրային ծառայողների նպատակային վերապատրաստման շարունակական գործընթացը,

❖ հանրային ծառայության համակարգում ներդնել հանրային ծառայողի անձնական պատասխանատվության ինստիտուտ՝ օրենսդրական խախտումներ իրականացրած հանրային ծառայողների նկատմամբ կիրառելով օրենքով սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցներ:

❖ ներդնել անձի հայերենի գիտելիքների ստուգման միասնական համակարգ, և այդ համակարգի կառավարման գործառույթի ապահովումը վերապահել Լեզվի կոմիտեին, քանի որ հանրային ծառայության բոլոր տեսակների համար տվյալ ոլորտը կանոնակարգող օրենքներով սահմանված է հայերենին տիրապետելու պարտադիր պահանջ, սակայն սահմանված չեն հայերենի տիրապետման պահանջը գնահատող կամ ստուգող կառուցակարգեր կամ լիազոր մարմին, հետևաբար ատենախոսության մեջ հիմնավորվել է, որ գործնականում որևէ կերպ չի ստուգվում անձի հայերենին տիրապետելու օրենսդրական պահանջը,

❖ հանրային ծառայության համակարգում նախատեսել հանրային ծառայողին փոխարինման ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար փոխարինողի վարձատրություն, իսկ ավելի բարձր պաշտոնի փոխարինման ժամանակահատվածում՝ ավելի բարձր պաշտոնի վարձատրություն տրամադրելու իրավական կարգավորումներ, քանի որ մինչև ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը փոխարինողը միաժամանակ իրականացնում է թե՛ իր, թե՛ ժամանակավոր թափուր պաշտոնի գործառույթները, իսկ ավելի բարձր պաշտոնի փոխարինելու դեպքում ավելանում է նաև կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը, որոշումներ կայացնելու լիազորությունները, շփումների և ներկայացուցչության շրջանակը:

5. Ատենախոսությունում կատարված տեսական-իրավական վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ համայնքային ծառայության պաշտոնների դասակարգումը 3 խմբերի՝ գլխավոր, առաջատար և կրտսեր, կարող է առաջացնել ղեկավարման, կառավարման, կազմակերպական, գործառույթների համակարգման և վերահսկման որոշակի դժվարություններ: Համայնքային ծառայության պաշտոնների դասակարգման համակարգը արդիականացնելու, հանրային ծառայության ոլորտի բարեփոխումներին համապատասխանեցնելու, ինչպես նաև

պետական ծառայության և համայնքային ծառայության պաշտոնների դասակարգման օրինաչափությունները միասնականացնելու նպատակով առաջարկվել է համայնքային ծառայության պաշտոնները դասակարգել երկու խմբերի՝ ղեկավար պաշտոններ և մասնագիտական պաշտոններ:

6. Հաշվի առնելով, որ համայնքային ծառայողի զբաղեցրած պաշտոնին մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը հնարավոր կլինի գնահատել միայն յուրաքանչյուր ծառայողի կատարած աշխատանքի արդյունքի անհատական գնահատման հիման վրա, առաջարկվել է «Համայնքային ծառայության մասին» օրենքից հանել համայնքային ծառայողի ատեստավորման ինստիտուտը և համայնքային ծառայության համակարգում ներդնել համայնքային ծառայողների կատարողականի գնահատման նոր համակարգ:

7. Հանրային ծառայության օրենսդրության արդիականացման և կատարելագործման նպատակով առաջարկվում է լրամշակել «հանրային ծառայություն», «պետական ծառայություն» հասկացությունների սահմանումները: Հանրային ծառայությունը կազմակերպվում է որոշակի սկզբունքներով, որոնք բխում են Սահմանադրությունից և հանրային ծառայության կազմակերպման առանձնահատկություններից, իրականացվում են հանրային ծառայության մեջ գտնվող անձանց ամենօրյա գործունեության ընթացքում, սակայն «Հանրային ծառայության մասին» օրենքում բացակայում է «հանրային ծառայության սկզբունք» հասկացության սահմանումը: Ատենախոսության մեջ առաջարկվել է «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրել «հանրային ծառայության սկզբունք» հասկացության հետևյալ հեղինակային սահմանումը. «Հանրային ծառայության սկզբունքները այն ելակետային, հիմնարար չափանիշներն են,որոնցով ղեկավարվում և առաջնորդվում են հանրային ծառայության մեջ գտնվող անձինք իրենց մասնագիտական գործունեության ընթացքում:»:

8. Սահմանադրությամբ և մի շարք օրենքներում լայնորեն կիրառվում է «պաշտոնատար անձ» հասկացությունը, սակայն օրենսդրությամբ բացակայում է այդ հասկացության իրավական սահմանումը: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա առաջարկվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում ամրագրել «պաշտոնատար անձ» հասկացության հետևյալ հեղինակային սահմանումը. «Պաշտոնատար անձը ընտրված կամ նշանակված այն ֆիզիկական անձն է, ով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում անժամկետ կամ որոշակի ժամկետով իրականացնում է այդ մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված

գործառույթներ և օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում այդ գործառույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար»:

9. Ներկայումս օրենսդրությամբ հստակ չի լուծվել պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների ծառայողների կարգավիճակը: Պետական և համայնքային կազմակերպություններն ու հիմնարկները ստեղծվում են ոչ առևտրային նպատակներով և լուծում են մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության ոլորտի խնդիրները, որոնք ծառացած են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների առջև: Այսինքն՝ թե հանրային ծառայողները, թե պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների ծառայողները կոչված են իրականացնելու վերոնշյալ բնագավառներում պետության խնդիրներն ու գործառույթները, ֆինանսավորվում են պետական կամ տեղական բյուջեի միջոցներից, ուստի գտնում ենք, որ պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների ծառայողները նույնպես պետք է համարվեն հանրային ծառայողներ, ինչպես պետական ծառայության հարուստ ավանդույթներ ունեցող երկրներում է (Ֆրանսիա, Գերմանիա): Պետական և համայնքային կազմակերպություններում, հիմնարկներում աշխատողների իրավական կարգավիճակը հստակեցնելու նպատակով առաջարկվել է հանրային ծառայողների շրջանակում ընդգրկել նաև պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների աշխատողներին:

10. Հանրային ծառայության արդյունավետության բարձրացման և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց Սահմանադրությամբ ու օրենքներով վերապահված գործառույթների փաստական ու իրավական շարունակականությունը ապահովելու նպատակով առաջարկվել է «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրել, որ Աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ժամանակավոր բացակայության հիմքերի (հղիության և ծննդաբերության արձակուրդ, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ, ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինություն) առկայության դեպքում տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը նշանակում է պարտականություններ կատարող՝ մինչև ժամանակավոր բացակայության հիմքի վերացումը:

11. Սահմանադրության և միջազգային իրավական նորմերի պահանջները ապահովելու, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքից ազատելու հայեցողական լիազորությունը չարաշահելու կամ կամայական կիրառելու իրավական հնարավորությունը բացառելու նպատակով առաջարկվել է հանրային

պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի նախաձեռնությամբ պաշտոնից ազատումը պայմանավորել բացառապես հանրային պաշտոն զբաղեցնող անձի գործունեության արդյունավետությամբ՝ հիմքում դնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի անբավարար աշխատանքի դեպքում պաշտոնից ազատելու կամ լիազորությունները դադարեցնելու հարցը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. Մովսիսյան Ա., «Հանրային ծառայության տեսակները և դրանց առանձնահատկությունները», «Օրինականություն» գիտագործնական պարբերական, ՀՀ դատախազություն, Երևան, N 127, 2022 թ., էջեր 66-71:

2. Մովսիսյան Ա., «Պետական ծառայությունը, դասակարգումը և փոխհարաբերությունները հանրային ծառայության մյուս տեսակների հետ», «Օրինականություն» գիտագործնական պարբերական, ՀՀ դատախազություն, Երևան, N 131, 2022 թ., էջեր 53-58:

3. Մովսիսյան Ա., «Համայնքային ծառայության էությունն ու նշանակությունը», «Օրինականություն» գիտագործնական պարբերական, ՀՀ դատախազություն, Երևան, N 132, 2022 թ., էջեր 23-29:

4. Մովսիսյան Ա., «Հանրային ծառայության էության և սկզբունքների որոշ հիմնախնդիրներ», «Լրաբեր» պարբերական, Հայ-Ռուսական համալսարան, N 1, 2022 թ., էջեր 86-96:

5. Մովսիսյան Ա., «Համայնքային ծառայության արդի հիմնախնդիրները և դրանց իրավական լուծումները», «Արդարադատություն» գիտական հանդես, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, N 2, Երևան, 2022 թ., էջեր 40-47:

6. Մովսիսյան Ա., «Համայնքային ծառայության առանձնահատկությունները», «Լրաբեր հասարակական գիտությունների» պարբերական, Գիտությունների ազգային ակադեմիա, N 2, Երևան, 2023 թ., էջեր 99-108:

АНУШ ОВИКОВНА МОВСИСЯН

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

АННОТАЦИЯ

Институт государственной службы имеет глубокие корни, сформировался вместе с возникновением государства и права, окреп и прошел длительный путь развития. В 2001 году с принятием Закона НО-272 «О государственной службе» в Республике Армения была фактически введена система государственной службы, после чего законодательно-нормативная база, регулирующая государственную службу, претерпела множество изменений, которые в основном были направлены в совершенствовании и повышении эффективности этой системы. Масштабные реформы системы государственной службы, начатые в 2014 году и реализуемые в настоящее время, обусловлены повышением эффективности государственного управления, а также укреплением социальной и политической стабильности правового государства. Одним из ключевых вопросов реализации этих целей является создание и развитие института государственной службы – структуры, обеспечивающей нормальную работу органов государственной власти и повышающей эффективность государственного управления.

Подчеркивая реализацию масштабных реформ, направленных на создание, модернизацию и совершенствование системы государственной службы, тем не менее, можно констатировать, что в настоящее время остаются нерешенные проблемы и законодательные пробелы в правовом регулировании государственной службы, которые требуют безотлагательного решения. решение и во многом связаны с совершенствованием системы государственной службы. В связи с этим решение проблем должно быть направлено на содействие карьерному продвижению государственных служащих на основе индивидуальных профессиональных знаний и компетенций, модернизацию методов замещения вакантных должностей и проведения отборов по итогам конкурса, использование современных методов обучения. в курсах повышения квалификации, разработке эффективных структур управления кадровым резервом, личной ответственности государственного служащего за практическое применение принципа, за определение и применение качественных критериев приема на государственную службу. Полноценное становление и эффективное функционирование системы государственной службы в Республике Армения во многом определяется решением упомянутых проблем,

поэтому выбор темы диссертации, актуальность и значимость диссертации определяются необходимостью за всестороннее исследование проблем, существующих во всей системе государственной службы, и разработку соответствующих правовых решений и практических рекомендаций.

Научная новизна диссертации состоит в том, что исследование является первым комплексным исследованием, посвященным изучению конституционно-правового регулирования системы государственной службы в отечественной юриспруденции и выявлению теоретико-правового комплекса проблем отдельных ее видов.

Основная цель диссертации - осветить существующие проблемы в системе государственной службы в результате теоретико-правового анализа законодательных норм, регулирующих государственную службу, разработать научно обоснованные законодательные рекомендации и правовые решения, направленные на совершенствование, развитие. , модернизация, совершенствование системы государственной службы и преодоление существующих законодательных пробелов путем объединения международного опыта:

В работе автор провел теоретико-правовой анализ, выявил и осветил проблемы в законодательстве, регулирующем каждый вид государственной службы, сделал на их основе выводы и представил научно обоснованные правовые решения и законодательные рекомендации, которые могут быть применены в сфере права. - производственная деятельность: в целях модернизации и совершенствования системы государственной службы.

В работе автор пришел к выводу, что эффективность государственной службы во многом зависит от решения проблем в системе государственной службы, поэтому развитие, совершенствование и модернизация государственной службы должны включать в себя и правовое решение проблем. правовые пробелы, правовые противоречия и проблемы в законодательстве о государственной службе.

ANUSH HOVIK MOVSISYAN

MAIN PROBLEMS OF CIVIL SERVICE IN THE REPUBLIC OF ARMENIA (THEORETICAL AND LEGAL ANALYSIS)

ABSTRACT

The institute of civil service has deep roots, was formed together with the emergence of the state and law, strengthened and went through a long path of development. In 2001, with the adoption of the Law NO-272 "On Civil Service", the civil service system was actually introduced in the Republic of Armenia, after which the legislative and regulatory framework governing the civil service underwent many changes, which were mainly aimed at improving and increasing the efficiency of this system. Large-scale reforms of the civil service system, launched in 2014 and currently being implemented, are due to the increase in the efficiency of public administration, as well as the strengthening of the social and political stability of the rule of law. One of the key issues in achieving these goals is the creation and development of the civil service institution - a structure that ensures the normal operation of government bodies and increases the efficiency of public administration. Emphasizing the implementation of large-scale reforms aimed at creating, modernizing and improving the civil service system, it can nevertheless be stated that at present there are unresolved problems and legislative gaps in the legal regulation of the civil service that require immediate resolution. solution and are largely related to the improvement of the civil service system.

In this regard, solving problems should be aimed at promoting the career advancement of civil servants based on individual professional knowledge and competencies, modernizing the methods of filling vacant positions and conducting selections based on the results of the competition, using modern teaching methods. in advanced training courses, developing effective structures for managing the personnel reserve, personal responsibility of a civil servant for the practical application of the principle, for determining and applying quality criteria for admission to the civil service. The full development and effective functioning of the civil service system in the Republic of Armenia is largely determined by the solution of the above-mentioned problems, therefore the choice of the dissertation topic, the relevance and significance of the dissertation are determined by the need for a comprehensive study of the problems existing in the entire civil service system and the development of appropriate legal solutions and practical recommendations.

The scientific novelty of the dissertation is that the study is the first comprehensive study devoted to the study of the constitutional and legal regulation of the civil service system in domestic jurisprudence and the identification of the theoretical and legal complex of problems of its individual types.

The main goal of the dissertation is to highlight the existing problems in the civil service system as a result of the theoretical and legal analysis of legislative norms regulating the civil service, to develop scientifically based legislative recommendations and legal solutions aimed at improvement and development. , modernization, improvement of the civil service system and overcoming existing legislative gaps by combining international experience:

In the work, the author conducted a theoretical and legal analysis, identified and highlighted the problems in the legislation regulating each type of civil service, made conclusions on their basis and presented scientifically based legal solutions and legislative recommendations that can be applied in the field of law. - production activities: for the purpose of modernization and improvement of the civil service system.

In the work, the author came to the conclusion that the effectiveness of the civil service largely depends on solving problems in the civil service system, therefore, the development, improvement and modernization of the civil service should include a legal solution to problems. legal gaps, legal contradictions and problems in the legislation on civil service.